ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Անի Ավետիքի Ռափյանի
«Կորոնար անգիոպլաստիկայի երկարատև կանխատեսումը սրտամկանի սուր ինֆարկտով տարեց հիվանդների խմբում»
թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ,
որը ներկայացվում է ԺԴ.00.04 «Սրտաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով

Անի Ավետիքի Ռափյանի «Կորոնար անգիոպլաստիկայի երկարատև կանխատեսումը սրտամկանի սուր ինֆարկտով տարեց հիվանդների խմբում» թեմայով ԺԴ.00.04 «Սրտաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացրած ատենախոսական աշխատանքը կառուցվածքային, մեթոդաբանական և գիտական առումներով ամբողջական է, արդիական և համապատասխանում է ժամանակակից սրտաբանության զարգացման հիմնական ուղղություններին: Աշխատանքը նվիրված է սրտամկանի սուր ինֆարկտով տարեց հիվանդների բուժման ռազմավարությունների արդյունավետության և երկարաժամկետ ելքերի գնահատմանը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կորոնար անգիոպլաստիկայի դերին տվյալ պոպուլյացիայում: Հաշվի առնելով բնակչության ծերացման համաշխարհային միտումները և սիրտ-անոթային հիվանդությունների բարձր տարածվածությունը՝ ընտրված թեման ունի կարևոր գիտական և գործնական նշանակություն:

Աշխատանքի արդիականությունը

Սրտամկանի սուր ինֆարկտը շարունակում է մնալ մահացության առաջատար պատճառներից մեկը, իսկ տարեց հիվանդների շրջանում դրա վարումը առանձնանում է բարձր ռիսկայնությամբ և բազմաախտաբանական բարդություններով: Չնայած միջամտական սրտաբանության զգալի առաջընթացին, տարեց հիվանդների բուժման տակտիկայի ընտրությունը հաճախ շարունակում է մնալ վիճահարույց՝ պայմանավորված ուղեկցող հիվանդություններով, ֆունկցիոնալ պաշարների սահմանափակմամբ և միջամտական բարդությունների հավանականությամբ: Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեց հիվանդների երկարաժամկետ կանխատեսման վերաբերյալ տվյալները ոչ միշտ են համադրելի և հաճախ ներկայացված են ընտրողական խմբերի հիման վրա: Այս

հանգամանքը կարևորում է իրական կլինիկական պրակտիկայի տվյալների վերլուծության անհրաժեշտությունը: Ատենախոսությունը նպատակ ունի գնահատելու կորոնար անգիոպլաստիկայի ազդեցությունը երկարաժամկետ ապրելիության, կրկնակի հոսպիտալացումների և բարդությունների զարգացման վրա տարեց հիվանդների խմբում, ինչը լիովին համապատասխանում է արդի սրտաբանության առաջնահերթ ուղղություններին:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսական աշխատանքն ունի դասական կառուցվածք՝ .

- Ներածություն, որտեղ հիմնավորվում է թեմայի արդիականությունը և ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները,
- Գրականության վերլուծություն, որտեղ ներկայացված են սուր կորոնարիամախտանիշների բուժման ժամանակակից մոտեցումները և տարեց հիվանդների կառավարման առանձնահատկությունները,
- Նյութեր և մեթոդներ բաժին, որտեղ մանրամասն նկարագրված են հետազոտության դիզայնը, ընտրանքի ձևավորման սկզբունքները և վիճակագրական մոտեցումները,
- Արդյունքներ և քննարկում բաժիններ՝ տրամաբանական կառուցվածքով և համադրությամբ միջազգային տվյալների հետ,
- Եզրակացություններ և գործնական առաջարկություններ:

Աշխատանքի կառուցվածքը հստակ է, տրամաբանական և համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին:

Մեթոդաբանական գնահատում

Հետազոտությունն իրականացված է ռետրոսպեկտիվ վերլուծության ձևաչափով՝ ընդգրկելով տարեց հիվանդների կլինիկական տվյալները: Ներկայացված են ներառման և բացառման չափանիշները, ինչն ապահովում է ուսումնասիրվող խմբի հստակ սահմանում:

Վիճակագրական վերլուծության ընթացքում կիրառվել են ժամանակակից մեթոդներ՝

- Kaplan–Meier ապրելիության վերլուծություն,

- log-rank թեստ,
- Propensity Score՝ բազմագործոնային ռեգրեսիոն մոդելներ՝ խեղաթյուրող գործոնների ազդեցության շտկմամբ:

Ընտրված մեթոդաբանությունը ընդհանուր առմամբ համարժեք է հետազոտական խնդիրներին և ապահովում է արդյունքների բավարար արժանահավատություն:

Միաժամանակ պետք է նշել, որ ռետրոսպեկտիվ և միակենտրոն դիզայնը սահմանափակում է արդյունքների ընդհանրացման հնարավորությունը: Հետազոտական խմբերում ընդգրկված են ոչ դեղապատ ստենտերով ստենտավորված պացիենտներ, որոնց մոտ գրանցված արդյունքները համեմատվում են դեղապատ ստենտերով ստենտավորված պացիենտների հետ: Դա արդիական էր հետազոտության ընդգրկված ժամանակահատվածում, սակայն ներկայումս ոչ դեղապատ ստենտեր չեն կիրառվում:

Գիտական նորույթ

Աշխատանքի շրջանակներում գնահատվել է կորոնար անգիոպլաստիկայի երկարաժամկետ ազդեցությունը տարեց հիվանդների կանխատեսման վրա:

Վերլուծվել են.

- Երկարաժամկետ ապրելիության ցուցանիշները,
- Կրկնակի հոսպիտալացումների հաճախականությունը,
- Բուժման ռազմավարության ընտրության վրա ազդող անկախ գործոնները:

Արդյունքները լրացնում են առկա գիտական տվյալները և կարևոր ներդրում են գերոնտոկարդիոլոգիայի ոլորտում:

Գիտական և գործնական նշանակություն

Ատենախոսության արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական արժեք: Դրանք կարող են կիրառվել կլինիկական պրակտիկայում՝ տարեց հիվանդների բուժման տակտիկայի ընտրության, ռիսկի շերտավորման և երկարաժամկետ հսկողության կազմակերպման համար:

Առաջարկություններ

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ անհրաժեշտ եմ համարում պարզաբանել հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք հետազոտության մեջ կատարվել է հիվանդների ֆունկցիոնալ վիճակի կամ խոցելիության /frailty/ համակարգված գնահատում, և եթե ոչ, որքանո՞վ կարող էր դրա ներառումը ազդել ստացված արդյունքների մեկնաբանության վրա:
2. Հաշվի առնելով հետազոտության ռետրոսպեկտիվ բնույթը՝ արդյո՞ք կատարվել է հետազոտության մեջ ընդգրկված պացիենտների հետագա վարման տակտիկայի վերլուծություն:
3. Չնայած հետազոտության խնդիրների մեջ նշված չէին, բայց հետաքրքիր կլիներ ուսումնասիրել հետազոտության մեջ ընդգրկված բազմանոթ կորոնար ախտահարումներով պացիենտների հետագա միջամտական բուժման պատմությունը, որը կարող է էականորեն անդրադառնալ հիվանդության ելքերի վրա, հատկապես տարեց պացիենտների խմբում:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում աշխատանքի գիտականարժեքը և ունեն առավելապես կատարելագործման բնույթ:

Եզրակացություն

Այսպիսով, Անի Ավետիքի Ռափյանի «Կորոնար անգիոպլաստիկայի երկարատև կանխատեսումը սրտամկանի սուր ինֆարկտով տարեց հիվանդների խմբում» թեմայով ատենախոսական աշխատանքը, ներկայացված ԺԴ.00.04 «Սրտաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, իր արդիականությամբ, մեթոդաբանական հիմնավորվածությամբ, արդյունքների արժանահավատությամբ և գիտական ու գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲԳԿԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների համար սահմանված պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԴ.00.04 «Սրտաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

«Աստղիկ» բժշկական կենտրոնի
Գիտա-ուսումնական գծով փոխտնօրեն
Միջամտական սրտաբան, բ.գ.թ. Յու.Ս.Մակարյան
27 փետրվարի 2026թ.